

Rev. Fr. Guregh Kalfayan

250 Clarke Street

Bridgeport, Conn. 06604

Tel. 372-0140

Մարտ 8, 1970

Հովիւին Տարեկան Տեղեկագիրը

Սիրելի Անդամներ,

Փառք կուտանք Բարձրեալն Աստուծոյ որ, իր օգնութեամբ եւ ջեր  
բոլորին բերած նիւթական ու բարոյական օժանդակութեամբ այս եկեղեցին  
եւ մենք բոլորեցին յաջող տարի մը: Ուրեմն, պարտք կզգամ, մեր այս  
տեղեկագիրին մէջ Զեղի ներկայացնել մեր գործունէութիւնը եւ խնամօրէն  
տալ ինչ որ մենք անհատապէս կըրցած ենք ընել այդ յաջողութեանց մէջ:

Մեր այդ գործունէութեանց ընդհանուր թւելու համար կաննքանք  
պարզապէս ըսկօխլ հետեւեալ ձեւով:—

ժամապաշտութիւն:—

1. Մեր այս եկեղեցւոյ մէջ 1969 տարուան ընթացքին մատուցած ենք ժամեր—  
զութիւն: Ս. Պատարագ եւ Հսկումի արարողութիւն: Որոնց ընդհ. թիւն է  
52: Յիւսուեն երկու: Անշուշտ ներառաբալ Հսկումի արարողութիւն, որ  
եղած է վեց ամէն Ուրբաթ երեկոյ, եւ երկու ձրազալոցի Պատարագ:

Ծիսակատարութիւն:—

1969 տարուան ընթացքին տեղեի ունեցած են հետեւեալ ծիսակատարութիւնները:—  
6 մկրտութիւն եւ Դրօշմ. Երկու Պսակաղբութիւն եւ 7 թաղում: Այս թաղում—  
ներէն ոմանք եղած հոս իսկ ոմանք եղած են, քաղաքէն դուրս:

2.— Հիւանդանոցներու այցելութիւն:— Մեր կողմէ եղած են մօտաւորապէս  
50 Յիսուեն հիւանդանոցի մէջ եղած հիւանդներու այցելութիւն:

3.— Տուն Օրհնէք եւ Տուներու Աթցելութիւն:— 1969 տարուան ընթացքին  
կատարած ենք տուններու Օրհնութիւն եւ տուներու այցելութիւն որոնց  
ընդհ. թիւը կը հասնի 225:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ:—

Մեր թեկադրութեամբ Կիրակնորեայ Քարժարանի Ուսուցչական կազմին հետ  
համագործակցաբար անցնող տարին կազմակերպած էինք երեք դասախօսութիւններ:  
Այդ Դասախօսութիւնները տեղի ունեցան Ուրբաթ երեկոյներ այս սրահին մէջ:  
Դասախօսներն էին:— Գերշ. Տ. Վազգն Եպս. Օհանեան, Տիրացու Գրիգոր  
Մազսուտեան, եւ Խումբ մը Դասախօսներ Մէյրէն անտ Գանսըլիկի վրայ:

Եւ բանախօսութիւններ եղած են ճաշկերոյթներու առիթով, որ խօսած են:—  
ՓրօՅ. Յակոբ Եթմէքճեան, Տք. Պերճ Հայրապետեան, Տք. Սօլաքեան, Տիրա Անդրանիկ  
Խաչատուրեան, եւ Տիրացու Գրիգոր Ոսկանեան:

Rev. Fr. Guregh Kalfayan

250 Clarke Street

Bridgeport, Conn. 06604

Jnl. 372-0140

ԺՈՂՈՎՆԵՐ.—

1969 տարուան ընթացքին մեր մասնակցութիւնը բերած ենք Եկեղեցւոյ կազմակերպական ու վարչական գործերուն.— Եկեղեցւոյ Միակն խորհուրդի ջստան ջորս ժողովներուն "24" օւլտ առթիւ տուած ենք մեր թելադրութիւնները. եւ բերած ենք մեր գործոն մասնակցութիւնը անոր ծրագրած գործերուն եւ մշակած ծրագիրներուն օւլտ առթիւ կուգամ մեր գնահատութեան խօսքը ուղել Միակն խորհուրդի բոլոր անդամներուն, եւ յատկապէս Տիար Յարութիւն Մակաբեանին իբրեւ Ատենապետ Միակն խորհուրդին որ վարեց իր պաշտօնը խղճմտօքէն:

Ներկայ եղած ենք Տիկնանց Միութեան բոլոր անդամական ժողովներուն, եւ իրենց կողմէ կազմակերպուած ճաշերուն եւսայլ ձեռնարկներուն: Մեր գնահատութեան խօսքը կուգենք ուղել Տիկ. Մարթա Խաչատուրեանին, եւ իր վարչութեան անամներուն որ, իրենց ուսերուն վրայ դրուած այդ դժուար պարտականութիւնը սիրով տարին օւլտ առթիւ կուգամ իմ շնորհակալութեան խօսքը ուղել Տիկնանց Միութեան երեք անդամներուն.— Տիկ. Ռօզ Սթամպուլեանին, Տիկ. Մէյրի Կօփեանին, եւ Տիկ. Էլնօր Զիսքին եւ Տիկ. Մարթա Խաչատուրեանին որ պատրաստեցին Եկեղեցւոյ մէջ բաշխուած մասերը:

Հայ Դպրոցին, խնամակալութեան հետ անցեալ տարուայ շրջան ն համագործակցար կատարած ենք Այճ Հայ Դպրոցի աշխատանքները: Մենք ջորսքաբար օր երեկոյեան տեղի ունեցած էք Երեքներու Հայ Դպրոց, որ Վեց աշակերտներ բերած են իրենց մասնակցութիւնը, իսկ ամեն ուրբաթ Օր Կէօքէն յետոյ, նախ Ալթունեաններուն բնակարանին մէջ, եւ ապա, Թրամպլի Հայ Սթուլին մէջ եղած են Դասաւանթութիւնները, որուն միակ Դաստիարակ Ուսուցիչը մենք եղած ենք փոքրերուն ընդհ. Թիւր եղած է 18 աշակերտութիւն: Օւլտ առթիւ Հայ Դպրոցի խնամակալութեան հետ Թիւրսին կազմակերպած ենք Հայ Դպրոց ամսական շին հանդէսը եւ Հայ Դպրոցի վերաբացումին կազմակերպած ենք Դաշտահանդէս փոքրերուն եւ անոնց Մոնոլներուն օ Մեր գնահատութիւնը խօսքը կուգենք ուղել խնամակալութեան անդամներուն.— Փրօֆ. Յակոբ Էթմէճեանին, Տք. Պերճ Հարապետեանին եւ Տիար Անդրանիկ Խաչատուրեանին, ինչպէս նաեւ, Տէր եւ Տիկ. Հայկ Գալուստեանին որ նուիրեցին Դաշտահանդէսին բոլոր ծախսերը:

Կիրակնորեայ Վարժարանին, Բւսցչական Կազմին հետ միասնաբար բերինք մեր աշխատութիւնը անոր անմիջական գործերուն: Ներկայ եղանք անոնց բոլոր ժողովներուն, եւ մեր մասնակցութիւնը բերինք անոնց աշխատանքներուն օ Մեր գնահատութիւնը Տիկ. Լինա Կրաշեանին եւ Ուսուցչական կազմին:

Դպրաց Դասի փորձերուն եւ ժողովներուն բերած ենք մեր ախտանքը եւ Դպրաց Դասի կողմէ եղած որոշումներուն տաուած ենք մեր հաւանութիւն միասնաբար գործելով օւլտ առթիւ կուգանք մեր գնահատութեան խօսքը ուղել Տիար Գուրգու Վարդան Սթամպուլեանին, եւ Դպրագետուհի Տիկ. Գեղան Սթամպուլեանի, Երգահանար Օր. Էլմա Մաթէոսեանին, եւ Տիկ. Ճենի Գալտայեանին ու Օր. Սարա Տէր Մկրտիչեանին րպէս Ատենապետ Դպրաց Խումբին վարչութեան, որ համբերութեամբ եւ սիրով տարին ամէն Կիրակի օր անխաբան գալով իրենց մասնակցութիւնը բերին Ս. Պատարագի Հոգեպարար երգեցողութեան:

Թեմական Պատգամաւորական ժողովին բերինք մեր մասնակցութիւնը Եկեղեցւոյ Տրեսփոխան փրօֆ. Յակոբ Էթմէճեանին հետ, որ անցեալ Մայիսին գումարուեցաւ Ութըրթաունի Ս. Յակոբ Հայց. Եկեղեցւոյ մէջ:



Rev. Fr. Guregh Kalfayan

250 Clarke Street

Bridgeport, Conn. 06604

Tel. 372-0140

Արանց եւ Կանանց Միութեան Վարչական եւ Միութեան Ժողովներուն ներկայ եղած ու մեր մասնակցութիւնը բերած ենք: Միութեան կողմէ մշակուած բոլոր Երազիրներուն տուած ենք մեր լուրջ ուշադրութիւնը եւ անոնց հետ միասին գործած ենք այդ Երազիրներու յաջողութեան համար:

Պրեզիդընթ Գանսուրը ԱՅ Զըրջըսի Ժողովներուն մասնակցած ենք եւ Ընդհ. Բրիտոնեայ Եկեղեցիներ հետաքրքրող ու մասնաւորաբար Պրեզիդընթի Բրիտոնեայ Համայնքը հետաքրքրող հարցերով զբաղած ու մեր մասնակցութիւնը բերած ենք ՚ի բիւլէ Հայ Համայնք Պրեզիդընթ Բաղադրին:

Հրատարակութիւններ. - Բարի Լուրին հետ եկեղեցւոյս մէջ հրատարակուող բոլոր ծանուցազիրներուն գրեթէ բոլորին աշխատութիւնը, խմբագրելու մեքնազրեւցու տպելու, եւ զայն նամակատուն յանձնելու աշխատանք կատարուած է մեր միջոցաւ, Ըլլայ այդ Միական Խորհուրդին կամ ենթակազմակերպութիւններուն:

Այս առիթով կուզամ իմ զնահատութեան խօսքը ուղել Տէր եւ Տիկ. Բիջըրտ եւ ձեռնի Գալնայեաններուն իրենց բերած աշխատանքներուն համար:

Պազարին հատկապէս տուած ենք մեր ուշադրութեան անոր կազմակերպան ու մշակած Երազիրներուն մէջ: Անոր գրեթէ բոլոր աշխատութիւններուն բերած ենք մեր մասնակցութիւնը: Այս առիթով կուզամ զնահատութեան խօսքս ուղել Պրեզիդընթի Գանսուրըն եւ Ատենապետին Տիար Յարութիւն Մակաղեանին:

Մասնաւոր Ձեռնարկներ, մեր կողմէ եղած են աշխատանքներ մասնաւոր ձեռնարկներուն, որոնք են ըստ հետեւեալին:

Ուզած ենք մասնաւոր հետաքրքրութիւն մը ստեղծել երտիսարդներու մէջ: Անոնց հետ կազմակերպած ենք ու մեր մասնակցութիւնը բերած ենք Պէյս Պօլի խաղաղին երթալուց եւ անցեալ Օգոստոս 15ին, Երեսուն եւ Հինգ մեծեր եւ երիտասարդներ գացին Ծանթի Սթէյտըմը: Այս կազմակերպուած ձեռնարկին իրենց աշխատութիւնը բերին, Տիկ. Թերեսա Հարապետեան եւ Բիջըրտ Հարապետեան: Կը զնահատենք եւ կը շնորհակցենք իրենց մասնակցութիւնը այս ձեռնարկին մէջ:

Անցեալ Սեպտեմբերին, ունեցանք հանդիպում մը երիտասարդ Պատանիներուն հետ, եւ ուզեցինք հասկնալ եւ իրենց հետ մշակել Երազիր մը: Սակայն, իրենց Դպրոցական Աշխատանքները արթելք եղան անոր շարունակութեան: Կը յուսանք որ յառաջիկային կրկին իրենց հանդիպելու առիթը կուենենք եւ կը յաջողցնենք այդ Երազիրները:

Արդ կուզամ զնահատութեան խօսքս ուղել Թեմիս Բարեջան Առաջնորդին Գերշ. Թ. Թորոմ Արքեպս. Մանուկեանին որ իր հետ միասնաբար խորհուրդացելով ու գործելով վերլուծեցինք շատ մը կարեւոր հարցեր որոնք անմիջական կապ ունէին զազութիս կեանքին: Մեր զնահատութիւնը Ձեր բոլորին սիրելի անդամներ, որ Ձեր բերած նիւթական ու բարոյական օժանդակութեամբ անցեալ տարի այս եկեղեցին ունեցաւ յաջող գործունէութիւնը մը: Անշուշտ եղան զժուարակութիւններ եւ անոնք պիտի ըլլան ալ, որքան ատեն որ մարդ մը ստեղծուած է որ կը գործէ այսպիսի հասարական գործերու մէջ: Հոս կուզեմ Ձեր բոլորէն եւ այդ բոլոր անհատներէն ներողութիւն խնդրել եղած դիւրումացութիւններուն համար, եւ կը յուսամ որ ներելով ու ներուելով է որ մեր այս գործերը աւելի յառաջ կերթան ու աւելի կենսունակ կը դառնան:

Rev. Fr. Guregh Kalfayan

250 Clarke Street

Bridgeport, Conn. 06604

Tel. 372-0140

Մասնաւոր աշխատութեանց շարքին մորացութեան ենթարկուած էր անցեալ տարուայ Միսական ժողովի կողմէ Ծրագրուած փլէնի դրութիւնը: Մեր անմիջական գործը ըրինք Միսական Խորհուրդին միասին կազմակերպել ու Յանձնախումբ եւ անոնց հետ միասին մշակել ծրագիրներ այդ գործը յառաջ տանելու համար: Եւ Ուրախ ենք ըսելու այդ աշխատանքներուն շնորհիւ այսօր ըսկսած ենք փլէնի դրութիւն մեր եկեղեցւոյ մէջ անոր նիւթականը աւելի ապահով եւ աւելի հիմնական ընելու նպատակով:

Աղօթենք որ Աստուած զօրացնէ մեր բոլորին հաւատքը սէր եւ ուժ տայ որ, այդ բոլոր ծրագիրները զոր պիտի մշակենք այս ժողովին մէջ, յուսով եւ համբերութեամբ ու իրարու հետ հասկնալով ու համագործելով յառաջ տանիք ի փառս Աստուծոյ եւ ի Պայծառութիւն Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց:

Աղօթարար  
Կիւրեղ Բէնյ. Գալճայեան